ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- հունիսի 2021 թվականի № ---Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №513Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) №ՎԴ/2166/05/17 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հունիսի 5-ի №200Ա որոշմամբ «ՀայՌուսկոգեներացիա» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան (ԻՋԷԿ-1)» կայանից (այսուհետ՝ Կայան) առաքվող էլեկտրական էներգիայի գնման համար տրամադրված երաշխիքային ժամկետը ավարտվում է 2021 թվականի հունիսի 11-ին,

բ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի կողմից 2019 թվականի մայիսի 20-ին տրամադրված կատարողական թերթի և 2019 թվականի նոյեմբերի 18-ի «Վերաքննիչ բողոքը բավարարելու և կատարողական թերթը պարզաբանելու մասին» որոշման հիման վրա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսկոգեներացիա» փակ բաժնետիրական ընկերությունների միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի №ENA-15-27 էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի №12 լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիան 36,369 դրամ/կՎտժ գնով (առանց ավելացված արժեքի հարկի) ենթակա է գնման մինչև 2021 թվականի հունիսի 11-ը, և անհրաժեշտություն է առաջացել Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները 2021 թվականի հունիսի 12-ից սկսած

համապատասխանեցնել Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի №344Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 10-րդ գլխի պահանջներին, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №513Ա որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետում «31.164 » և «37.397» թվերը փոխարինել համապատասխանաբար «33.575» և «40.290» թվերով,

2) 2-րդ ենթակետում «16.144» և «19.373» թվերը փոխարինել համապատասխանաբար «1.88» և «2.256» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 12-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2021թ.